

9819

284

47-31

ԶՕՐԱՊԵՏ ՊՈՒԹՅ

4 NOV 2006

Գ Ր Ե Ց

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՆԻՒ ԵՕՐՔ



ԶՕՐԱՊԵՏ ՊՈՒԹՅ

284
ՎԻ-31

01.9
-69

284

4-31

ԳՐԱԴԱՐԱՆ

Հոգեւոր Եղբայրութեան Կիր. Դպրոցին
եւ Հոգ. Պատանեաց Միութեան

Նշանաբան, Մարան Աթա՝ Տէրը Կուղայ • Ա. Կորն. 16.22.

ՆԱԽԱԲԱՆ

— * —

Հետեւեալը փարզ մ'է որ Նիւ Եոբի Հայ-Աւետարանական Եկեղեցիին բեմէն խօսուեցաւ Կիրակի առաւ Սեպտեմբեր 8, 1912, հետեւեալ օրը ի գիր առնուեցաւ խօսուածին համեմատ գրեթէ բառ առ բառ, եւ ահա քանի մը մօտաւոր ու հեռաւոր բարեկամներու քելագրութեամբը կը հրատարակուի տեսրակի ձեւով:

Կը մաղթենք որ անկա հոգեւոր օրհնութիւն մը ըլլայ ընթերցող հասարակութեան ինչպէս եղաւ փարզիչին եւ ունկնդիր ժողովուրդին:

Նիւ Եոբ

Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ

Հոկտ. 30, 1912

28 AUG 2013

9819

ԶՕՐԱՊԵՏ ՊՈՒԹՅ

«Եւ բազում ժողովուրդ լսեւ նմա
բաղցրութեամբ:» Մարկ. ԺԲ. 37:

Ուիլիամ Պուլի, Փրկութեան Բանակին հիմնադիրը
և առաջին Զօրապետը, մէկն էր ամէնէն եղական ու
մեծ մարդոց զօր Անկլո-Սաքսոն ցեղը երբէք արտագրած
է: Անոր կենսագրութեան ուրուագիծը շատ պարզ է:
Անգղիա ծնաւ 1829ին: Տասնութինգ տարեկան եղած ա-
տենը դարձի եկաւ, որուն նշանակութեամբ քիչ ետքը
պիտի անդրադառնանք: 55 թուականին ամուսնացաւ,
իր կեանքին երկու կարեորագոյն զէպքերէն մէկը: 65ին
Լոնտոն և արուարձաններուն մէջ բացօդեայ տեղեր
կրօնական ժողովներ ընել սկսաւ: Այդ շարժումը 78ին
կազմակերպելով անոր տուաւ ներկայ ձեւը որ Փրկու-
թեան Բանակը անունին տակ աշխարհաճակ եղած է:
90ին հրատարակեց «In Darkest England» գիրքը որ իր
ստակալի յայտնութիւններովը Անգղիական ազգը հիմե-
րէն սարսելէ զատ եւրոպայի մէջ իսկ զգալի ցնցում
մը յառաջ բերաւ: 91ին աշխարհապաշտ չրջան մը կա-
տարեց իբր Աւետարանիչ: Վերջապէս քանի մը օր յա-
ռաջ. Օգոստոս 21ին մեռաւ, և օրինակելի պարզու-
թեամբ, միանգամայն անդերադանցիլի պատուով ու
փառքով թաղուեցաւ:

Մահուան օրէն ի վեր հրապարակագիրները կ'աշխա-
տին զանիկա համեմատել Եկեղեցական Պատմութեան
մեծ անձնաւորութիւններուն հետ: Ոմանք զանիկա ձան



64037-67

Ուէպլիի կը նմանցնեն որ մօտաւորապէս երկու դար յառաջ Մեթոսականութեան Շարժումը ի գոյութիւն բերաւ յուզում՝ որ ամբողջ Աւետարանական եկեղեցիին, մինչ իսկ անոր Եպիսկոպոսական ճիւղին մէջ, իրական վերածնունդի մը պատճառ եղաւ։ Ոմանք զանիկա կը բաղդատեն Ալիւլը Գրումուէլի հետ, Անգղիական պատմութեան հաշակաւորապէս հերոսը, որ արքայական ու ազնուապետական կարգերու դէմ գլուխ վերցնելով, թագաւորին դռնը կործանեց՝ անոր անդը ժողովրդային իշխանութիւն մը հաստատելու համար, որուն ազդեցութիւնը Անգղիոյ մէջ ներփակ չմնալով՝ Յամաքային Եւրոպայի մէջ իսկ շօշափելի այժ մը եղաւ։ Իսկ ուրիշներ զանիկա կը համեմատեն Իգնատիոս Լոյոլայի հետ, Պապական եկեղեցիին ծրգուելիք Ուստին հիմնադիրը, որ իր հիանալի կազմակերպիչ ձիրքովը, միադիրքական տեսակէն խորունկ հոգեւոր փորձաւորութեամբը և անուրանալի անձնութեան աշխատութեամբը Պաթուզիկէ Քրիստոնէութեան հաստատակաց ստացուածքը եղած է։ Պուլթ ասոնց ո՛չ մէկին կը նմանէր բոլորովին, բայց կարծես իւրաքանչիւրէն բարեմասնութիւն մը փոխ առած էր իր նկարագրին մէջ որդեգրելու համար։ Աւետարանական եւանդովը շատ կը նմանէր Ուէպլիի։ Թեւ տարանջական եւանդովը շատ կը նմանէր Ուէպլիի, միւսը Ռաբրիկային Մուտի, — Եկեղեցական Պատմութիւնը տեսած չէ մարդ մը որ այնքան ստուար բազմութեանց և այնքան երկար տարիներ քարոզեց որքան Զօրապետ Պուլթ՝ որուն սիրտը հոգեւոր կրակով մը մշտաբարբոք էր։ Կամքի զօրութեան կողմէ կը նմանէր Գրումուէլի։ Պողպատեայ սղնայար ունէր։ Իր դէմքին վրայ պատկառելի իշխանական երեւոյթ մը կը նշմարուէր որ իրեն կը քաշէր ու կը կապէր մարդիկը և տ-

նոնցմէ հնազանդութիւն կը պահանջէր ու կ'ընդունէր։ Իսկ կազմակերպելու տաղանդին կողմէն շատ կը նմանէր Լոյոլայի, միայն թէ անկէ բարի ու Քրիստոնէական նպատակի մը յատկացուց իր անվիճելի հանձարը։ Այս ամէն բարեմասնութիւններուն մի երջանիկ ու ներդաշնակ հաւաքումն էր Պուլթ, որուն կեանքը երկիրնքի մի յատուկ պարգեն էր համայն մարդկութեան, և որուն մահն իսկ Աստուծոյ շնորհքովը փրկող ու կենդանաբար այժ մը եղաւ շատերուն։

Երբ մարդուն կը մօտենանք նկարագրիր աւելի խրնամով ուսումնասիրելու համար, անմիջապէս մեր առջև կը լեռնանան զանիկա յատկանշող երկու առաքինութիւններ, մէկը՝ բարոյական, միւսը՝ իմացական։ Գուլթ, գորով, սէրն է առաջինը։ Տէր Յիսուսի մասին Աւետարանը կը պատմէ թէ «Անիկա ժողովուրդները տեսնելով, անոնց վրայ խղճաց, վասն զի յոգնած ու ցիրուցան եղած էին հովիւ չունեցող ոչխարներու պէս»։ Խղճաց։ Յիսուսի հոգին առատապէս կը բնակէր իր այս խոնարհ աշակերտին մէջ։ Անոր սիրտը մշտաբար զին աղբիւր մ'էր որմէ գորովի և սիրոյ աննդհատ հոսանք մը կը վաղէր դէպ ի բոլոր մարդկային ցեղը, մանաւանդ ինկած ու տառապող խաւերուն հանդէպ։ Կայրը ու կաղը, աղքատ ու անանկը, որքը ու ալրին, մեղաւորը ու մեղաւորուն հին անոր սրտին բոլոր կարեկցութիւնը դուրս կը կանչէր։ Գուլթ և սէրը անոր մէջ կիրք մը եղած էին։

Ոչ նուազ նշանաւոր էր անոր մաքին այն տրամադրութիւնը որուն շնորհիւ իր բոլոր գործունէութիւնը չինիչ ու փրկող հանգամանք մը ստացաւ։ Ուղեղը կարծես ճարտարապետող այժ մ'էր։ Երբ սրտին մէջ զգացում մը կ'արթնար, շուտով գաղափարականի մը կը փոխուէր, և գաղափարականը գործնական ու շօշափելի

ձեռք մը կ'առնէր: Անիկա մարդկութեան ցաւերը ի լոյս բերելով և ողբալով չբաւականացաւ, ինչպէս շատեր կ'ընեն, հապա դարմանումի գործնական միջոցներ հնարեց ու փորձեց: Շինող էր անոր միտքը ինչպէս սիրող էր սիրտը: Հետեւապէս անոր մէջ երկու մարդ կը տեսնենք: Թէ՛ դառն թէ՛ հնարիչ էր մարդը: Բարոյական երկրախոյզ մ'էր որ մարդկութեան գրեթէ անծանօթ և անձանաչելի եղող մէկ խաւը ի տես բերաւ իր ահաւելի գոյներովը: Քարոզներովը, գրքերովը և բոլոր գործունէութեամբը, աղգին ու ցեղին աչքը բացաւ տեսնելու թէ մեծահարուստ Բրիտանիա յետին աղքատութեան մէջ ստորնացած ու նուաստացած ուրիշ Բրիտանիա մը կը պարունակէ, թէ Քրիստոնեայ Լոնտոնի սրտին մէջ իբրեւ քաղցկեղ բոյն դրած հեթանոս Լոնտոն մը կայ, թէ երկինք Անգղիայի մէջ դժոխք Անգղիա մ'ալ կայ իր անասնացած միլիոնաւոր բնակիչներովը: Ուրիշ մարդ մը, զոր օրինակ վիպասան մը, այս ցնցիչ յայտնութիւնները կրնար ընել հաւատարմութեամբ, ստկայն Պուլթհ լոկ ցնցող չեղաւ, յաւետ փրկող մը ըլլալ ուղեց: Անիկա Անգղիական քաղաքակրթութեան մահացու ախտը բուժելու համար գործնական դարման հնարեց: Հնարել բառը չափազանց զօրաւոր չէ: Մարդը իսկատիպ միջոցներ, հասարակութեան և եկեղեցիին աչքէն վրիպած դարմաններ տեսաւ, զորոնք ծանրագլուխ Անգղիական աղքատ հախ քննադատեց ու ծաղրեց, յետոյ փորձեց, վերջապէս փառաւորեց:

Պուլթհի գործունէութիւնը երկու որոշ ուղղութիւն առաւ, մէկը՝ Աւետարանչական, միւսը՝ Ընկերական:

Մարդը ամէն բանէ առաջ խորոզիչ էր, դարուն մեծագոյն քարոզիչներէն մէկը: Քարոզչութիւնը իրեն արհեստ մը չէր, հապա կեանք էր: Իր բոլոր սրտովը Քրիս-

տոնէական Պատգամին կը հաւատար և ինքզինքը անոր երկնառաք աւետարները կը համարէր: Մարմինն ու հոգին լավանդակ ոյժերովը բարոյական ու հոգեւոր վերանորոգման մը աւետիսը կը հռչակէր հասարակ ժողովուրդին:

Այս նպատակը իրագործելու համար սովորական ճանապարհէն դուրս ելլելով, ամէնէն արտակարգ միջոցներու դիմեց ի հեծուկս ամէն տեսակ քննադատութեանց և հակառակութեան: Եկեղեցական բեմէն քիչ անգամ կը խօսէր, արդէն ի սկզբան շատ եկեղեցիներ անոր անձէն և կերպերէն կը խորշէին իբր թէ հանրախաէ մը: Անիկա նաև ստիպմամբ, յետոյ ընտրութեամբ, եկեղեցիին դռնէն դուրսը փնտռեց իր բեմը: Խուռնամբոխ փողոցին անկիւնը, հասարակաց պարտէզին մէջ ծառի մը շուքը, թատրոնը, պարասրահը, կրկէսի յատկացուած տաղաւարները, գինետունը, բանտին դուռը, մէկ խօսքով՝ ունէ տեղ ուր քարի մը վրայ կրնար սնկուել մէկ մարդու մը կամ հազար հոգիի խօսելու համար, աւանիկա իր օծուած բեմն էր: Իր աղօթարանը այնքան ընդարձակ էր որքան Աստուծոյ բացօդեայ դաշտը, և իր թեմը այնքան չայնածաւալ՝ որքան տառապող ու մեղաւոր մարդկութիւնը:

Արդէն ինչպէս անունէն ալ յայտնի է, իր բոլոր գործունէութիւնը զինուորական տարազը որդեգրեց: Փրկութեան Բանակը Բրիտանական բանակին կաղապարին համեմատ ձուլուած հաստատութիւն մ'է: Պուլթհ ինքը զորապետիւր եղաւ այս հոգեւոր բանակին, բոլոր ստորադաս պաշտօնեաներովը, — հազարապետ, հարիւրապետ, գնդապետ, մինչև հասարակ զինուորը: Զօրապետը և բոլոր պաշտօնատարները, մինչ իսկ կիները, զինուորական զգեստ կը հագնին: Իւրաքանչիւր պաշտօն-

եայ իր գերագոյնին հանդէպ, և բոլոր պաշտօնականները Զօրագլուխին հանդէպ, անպայման հնազանդութեան պարտականութիւնը կը ճանչնան: Պութի՛ այնպէս կը վարէր այս ոյժերը ինչպէս զօրապետը ռազմադաշտին վրայ կը վարէ իր զօրագունդերը: Մարդը բնազդամբ, բնատրութեամբ և զգազուժով իրական զինուոր էր, բայց հասարակ զինուորէն սրբան տարբեր: Հասարակ զինուորը զէնք կը գործածէ, այս զինուորը Սւետարանը կը գործածէր: Հասարակ զինուորը թշնամի կը նկատէ մարդոց մարմինը, այս զինուորին միակ թշնամին մարդոց մեղքն էր: Հասարակ զինուորը մարդ սպանելու արհեստին կը վարժեցնէ ինքզինքը, այս զինուորը մարդիկը փրկելու ու ապրեցնելու համար միայն կ'ապրէր: Հասարակ զինուորը ինքզինքը թաղաւորի մը հպատակ կը կը ճանչնայ որ իրեն նման մարդ մ'է. այս զինուորը հպատակն էր մի ուրիշ թաղաւորի որ մարդ չէ, որ երկինքի Աստուծոն է:

Սւետարանիչը երաժշտութեան թէ՛ գործիական թէ՛ ճաշակարան տեսակին, այն ալ զինուորական երաժշտութեան, շատ տեղ կու տար իր դրութեանը մէջ: Ռազմային ոգի ներշնչող երգերով և զինուորական շեշտ հնչեցնող եղանակներով լեցուց իր երգարանը: Սրինգը կը հնչեցնէր, փողը կը հարկանէր, թմբուկը կը զարնէր: Այս արտակարգ միջոցներուն, զորոնք եկեղեցին ի սկիզբան հպարտ վիճանէն թեմամբ մը անաղայման դատապարտեց, անկիա դիմեց նոյն անտարբեր դատապարգը իր ժողովներուն հրապուրելու և ապա անոնց մէջ կրօնական կեանք արթնցնելու նպատակով: Եւ աշխարհ գիտցաւ թէ ինչ հիանալի աստիճանով յաջողեցաւ: Զինուորական երաժշտութիւնը, որ ատեն մը լոկ զանգակն էր ամբոխը իր բեմին շուրջը հաւաքելու համար, հետ-

զհետէ ազդարար ձայնը եղաւ որով Որդին Մարդոյ մեկեալներուն խօսեցաւ և սնման հոգիներ գերեզմանէն դուրս ցատկեցին նոր կեանքով մը օժտուած: Ո՛վ կրնայ համբել անթիւ բիւրաւորները որ «Onward, Christian Soldiers» ի նման եղանակներէն ընդոստ արթննալով նոր արարած եղան Բրիտոս Թիսուսով:

Զօրապետ Պութի՛ մի աւելի ազդեցիկ զէնքը Բրիտոնէական վկայութեան զօրութիւնն էր: Անկիա «Դարձ» իրականութեան խորապէս համոզուած ըլլալով իր զինուորներուն մէջ այս տեսակ որոշ գիտակցութիւն մը անհրաժեշտ կը նկատէր արդիւնարար գործունէութեան: Բուժուած հիւանդէ մը իրաւամբ կ'ախկալէնք որ իր նորստաց առողջութեանը իրազեկ ըլլայ և զինքը դարմանող բժիշկին անունը երախտագիտութեամբ յիշէ: Նըմանապէս Զօրապետ Պութի՛ կը պահանջէր որ ամէն պաշտօնեայ և զինուոր նոր կեանքը գիտակցօրէն ճանչնայ, նաև ատենին և ատենէ դուրս պատրաստ ըլլայ վկայելու իր գտած փրկութեան, յաւէտ Փրկիչին մասին: Փրկութեան Բանակին հրաշալի ծաւալման զաղտնիքը այս կերպ յստակ դաւանումներու մէջ պէտք է փնտռել: Սկովտացի մեծահարուստ ու բարեպաշտ Գրոսլի օր մը պատահմամբ Փրկութեան Բանակին մէկ ժողովին ներկայ գտնուեցաւ: Մարդը այդ պարզ կիներու ու այրերու բացորոշ վկայութիւններէն սթափելով իսկոյն համոզուեցաւ որ անոնց մէջ դեռ իրեն անծանօթ հոգեւոր փորձառութիւն մը կայ: Տուն գնաց ու առանձնութեան մէջ ապաշխարութեամբ ու աղօթքով ինքզինք Աստուծոյ նուիրեց: Իսկոյն նոր բան մը տեսաւ վերէն: Իր հրապարակային կեանքին մէջ ալ նոր թուական մը բացուեցաւ: Արուարձանին մէջ իր փառաւոր ապարանը ձգելով եկաւ բնտանիքովը հաստատուեցաւ քաղաքին:

ամենէն աղատտ փողոցին մէջ՝ գտնիկա մարքելու ու փրկելու յաւտով, ինչպէս բրաւ իսկ։ Անտուհետե Գրգռ- լիի անունը հոմանիշ մը դարձաւ խորունկ կրօնական փորձառութեան և ամէն կերպ քրիստոնէական բարե- գործութեան։ Անիկա եղաւ Հայկական Զարդերուն ա- տենը մեր մարտիրոսացեալ ազգին ամենէն ջերմ բայց ինքնաթագոյց պաշտպաններէն մէկը։ Անիկա էր որ Փոօֆ. և Միսիս Բէնտըլ Հէրիսը իբր միութեամբ հրեշ- տակներ Հայաստանի և Կիլիկիայի խորերը առաքեց և իր քսակէն հազարաւոր ոսկի հանեց կսկծացող սիրտը և արտասու ալից աչքը սիրտիկու համար։ Ահա Փրկութեան Բանակին անթիւ հրաշքներէն մէկ հատը։

Անցնինք հիմա մարդուն ընկերական գործունէութիւնը դիտելու։

Իբրեւ ընկերական գործիչ ոչ նուազ հրաշալի է քան իբրեւ Քրիստոնեայ Աւետարանիչ։ Արդէն ամենէն աւելի այդ հանգամանքով կը զանազանուի իր դարուն եկե- ղեցականութենէն։ Առ հասարակ կղերը կը քարոզէ միայն, ընկերական գործունէութիւնը իր պաշտօնէն օ- տար համարելով, իսկ Պուլթի մարդասիրական մեթոտա-ւոր աշխատութիւնը հոգեւոր փորձառութեան սնրամա- նելի ընկերը կը նկատէր։ Անիկա մեղաւորը ապաշխա- րութեան բերելով չբաւականացաւ, հապա մեղքին ա-ռաջնորդող ու հետեւող խուսափելի չարիքները ի միջոյ բառնալու գործնական միջոցները մտածեց ու փորձեց։ Աղքատին, լքեալին, անկեալին և արեւեցեալին նիւթա- կան ու բարոյական վիճակը բարեփոխելու համար խիզախ միջոցներ թելադրեց։ Գործնական Քրիստոնէութիւն մը քարոզեց։ Ընկերական յեղաշրջող մը եղաւ։

«Պատարագոյն Անգղիա» երկը որ անոր անունը աշ-խատհանուց ըրած է, իր տեսակին մէջ ամենէն իսկա-

ախղ և գործնական արտադրութիւնն է Մամուլին։ Հոն Քրիստոնեայ հայրենասիր՝ Անգղիական ընկերութեան ստորնագոյն խաւերը դժոխատեսիլ ցաւերով ի հանդէս բերելէ ետքը, այդ դժոխքը գոցելու ազդեցիկ ու գոր-ծադրելի միջոցներ կ'առաջարկէ։ Կը թելադրէ աղքատ դասակարգէն գաղղյթներ հաստառել մեծ քաղաքներու մէջ, քաղաքէն դուրս ագարակներուն մէջ, Գանատալի և Աւստրալիայի նման արտասահմանի երկիրներուն մէջ։ Կը թելադրէ անտեսական «գորագունդեր» կազմել որ տուները այցելելով խեղճ ընտանիքներուն պիտանի բա- ներ սորվեցնեն, և բանտին դուռը հակելով նոր ար-ձակուած բանտարկեալները բարի տեղեր առաջնորդեն։ Կը թելադրէ արբեմով ժողովուրդը փրկելու համար ազ-դեցիկ միջոցներ ձեռք առնել, Կը թելադրէ անկեալ ու անտէրունչ կիներուն համար պատասպարան տուններ հաս-տատել, Կը թելադրէ որ կարօտ ժողովուրդին համար յատուկ փաստաբաններ, բժիշկներ ու խնայողական ըն-կերութիւններ հայթայթուին։ Գիրքը բովանդակ Անգ-լիոյ աչքը սեւեռեց այս մէկ մարդուն վրայ, որուն ան-ձին մէջ հարուստը աղքատին մեծ ախոյեանը և աղքա-տը իր աւագ եղբայրը ճանչցաւ։ Ազգը անոր սրտածը-լիկ աղաղակին սղնիւ առատաձեւութեամբ պատաս-խանելով քանի մը շարժումն մէջ կէս միլիոն աղարի գումար մը նուիրեց իր սիրական գաղափարներուն ի-րագործման համար։ Հարկաւ առանկ շարժում մը մէկ երկրի մէջ ներփակուած չէր կրնար մնալ։ Արագապէս ամէն ուղղութեամբ տարածուեցաւ։ Այսօր Փրկութեան Բանակը 58 տարբեր երկիրներու մէջ հաստատուած 904 կայաններ ունի, ուր 28 տարբեր բարբառով հոգեւոր կեանքի և ընկերական ծառայութեան աւետարանը կը մատակարարուի մեղաւոր մարդկութեան։ Անոր բոլոր

մանրամասն մեթոտները վաւերացնել կամ եկեղեցիին յանձնարարել ոչ կարելի է, ոչ սլառաշատ։ Հարկաւ ան-
յաջող փորձարկութիւններ եղան։ Անշուշտ սխալներ
գործուեցան և դեռ կրնան գործուիլ։ Դժբախտաբար
Հրքայի նման գիտական հեղինակութիւն մը բոլոր շար-
ժումին դէմ ձայն բարձրացնելով դարմանը ախտէն իսկ
գէշ ներկայացուց։ միջադէպ մը՝ որ կը ցուցնէ թէ Փր-
կութեան Բանակին վարչութեան գործելակերպին մէջ
քննադատելի կէտեր կային ու թերեւս կան։ Սակայն
այս քննադատութիւնները Շարժումին հոգիին չեն դըպ-
չիր, որ անտարակոյս մարդկային ցեղը նիւթապէս ու
բարոյապէս փրկելու համար ի գործ դրուած ամէնէն
հակայ ու յաջող փորձերէն մէկն է։ Անիկա իր անխախ-
տելի տեղը գրաւած է համայն մարդկութեան, մասնա-
ւորապէս անկեալ դասակարգին, սրտին մէջ, ինչպէս
քանի մը օր առաջ ապացուցուեցաւ թաղման հանդէսին
մէջ երբ երեք ժամ տեւող թափօր մը Պուլձի դադա-
ղին հետեւեցաւ և երկու միլիոն Լոնտոնցիներ ոտքի
վրայ կայնեցան անկեղծ յարգանք մատուցանելու խո-
նար՝ դասակարգէ ծագած մարդու մը, որ իր գործ-
նական մարդասիրութեամբ բոլոր աշխարհին հիացումին
ու երախտագիտութեանը առարկայ դարձած էր։

Արդեօք այս եզական կեանքին գաղտնիքը ի՞նչ բա-
նի մէջ կը կայանայ։

Անշուշտ կարեւոր բաժին մը հանելու է մարդուն ինք-
նատիկ կարողութեանը։ Կազմակերպող հանճար մըն էր
մարդը։ Եթէ անիկա զինուորականութիւնը իրեն ար-
հեստ ընտրած ըլլար, անտարակոյս իր դարուն զին-
ուորական հանճարներէն մէկը կ'ըլլար։ Եթէ ինքզինքը
առևտրական առարկէզին նուիրած ըլլար, անտարակոյս
այնքան պիտի յաջողէր որ Սուլ Սթրիթի միլիոնատէր

Ջոջեր պիտի ընտրէին անոր առջևը ծնրադրել տնտեսա-
կան ոյժերը դասակարգելու և վարելու մասին անկէ նոր
դասեր առնելու համար։ Պուլձի իր հիմնալի կարողու-
թիւնը ամէն անձնակեդրոն գործունէութենէ քաշելով
Աստուծոյ սեղանին վրայ դրաւ անվերապահ՝ անով թըշ-
ուառ ու մեղաւոր մարդկութեան սպասաւորելու հա-
մար։ Եւ Աստուած օրհնեց ու մարդկութիւնը գնահա-
տեց այս գոհարերումը որ այնքան յօժարակամ էր որ-
քան բոլորանուէր։

Անտարակոյս անոր յաջողութեան աւելի մեծ տարրը
պէտք է փնտռել Կասարինէ Մըմփորտի ակնթիւ մէջ, որ 55
թուականին ընտրեց անոր կինը ըլլալ։ «Առաքինի կինը
ո՞վ կրնայ գտնել անոր գինը գոհարներէ շատ աւելի
է»։ Զօրապէս Պուլձի գտաւ հատ մը։ Եթէ երբեք մեծ
մարդ մը իր յաջողութեան համար մեծապէս իր կողա-
կիցին պարտական եղած է, այն մարդը Փրկութեան
Բանակին հիմնադիրն է։ Կ'ըսուի թէ պատմութեան ծա-
նօթ ուրիշ առաջնակարգ կրօնական կազմակերպութիւն
մը չկայ որ հաւասարապէս մարդու մը և իր կնոջը ձե-
ռակերտը ըլլայ։ Եթէ Պուլձի Փրկութեան Բանակին
հայրն է, Կատարինէ անշուշտ մայրն է։ Անզուգական
անձնաւորութիւն մըն էր Կատարինէ որ իր մշակուած
միտքը, գործադուլի սիրտը ու ձեռներէց ոգին ի
սպաս դրաւ անկեալ մարդկութեան նիւթական և բա-
րոյական բարեկաւուրեանը։ Իգական առաքինութիւն-
ներով օժտուած մէկը և եօթը զաւակներու մայրը ըլ-
լալով հանդերձ իր այրին ոչ միայն անբաժան ընկերը,
հապա շատ անգամ խորհրդատուն և ուղեցոյցը եղաւ։
Նա էր որ երբ յարանուանական սեղմումներու համա-
կերպելու հարցը Մեթոտական Գոնֆէրանսին առջև կը
ծնծուէր, վերնատունը իր նստարանէն վեր ցատկելով

դու եղբայր կ'ընէր: «Սէրը Աստուծմէ է, և ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է:»

Ապրածին պէս ալ մեռաւ: Անոր մահէն կենդանաբար ոյժ մը ելաւ: Թաղումին նախընթաց իրիկունը երբ 30,000 հոգիով խոնուած սրահին մէջ յուզարկաւորութեան ոչ ակտուր լայն զուարթ ու յաղթական հանդէսը կը կատարուէր, պաշտամունքը ինքնաբերաբար կրօնական ձև առաւ, որմէ հանդիտանալու բազմութիւնը այնքան ներշնչուեցաւ որ մարդիկ տասնեակներով ելան և մարգարէին հրաշքին արդի պայմաններու տակ և աւելի իրական ձեւով կրկնուեց: Մեռեալներ մարգարէին ոսկորներուն դաշելով կենդանացան: Ասկէ առաջ երբ յուզարկաւորութեան հանդէս մը Արթնութեան ժողովի փոխուած էր: Մեր օրովը եղաւ և տեսանք:

Արդ կը մնայ հարցնել թէ արդեօք աշխարհը այս շարժումէն ի՞նչ տեսական բարիք ժառանգեց: Մեր ժառանգութիւնը մեծ ու բազմազան է: Մեծադոյնը միայն յիշելով, աշխարհը նոր տեսիլքի մը (vision) արժանացաւ: Ընկերական Խղճին վրայ եռապատիկ եղեւութիւն մը մշտնջենապէս տպաւորուեցաւ:

Նախ՝ Մարդկային Յեղին Ողորդեալ Խաւերը.

Եթէ չենք սխալիր, ածականին այս յատուկ գործածութիւնը Պոլիէն ծագում առաւ: Ամէն երկրի մէջ, մանաւանդ քաղաքակրթեալ երկրներու մէջ «ողորդեալ» ընկուզեալ, կորուսեալ տարր մը կայ, որ թեհալ մեր պանծալի քաղաքակրթութեան մի անխուսաբեալ մեր պանծալի քաղաքակրթութեան մի անխուսաբեալ մի անխուսաբեալ արդար պատիժն է: Գիշի հետեւանքը, միանգամայն արդար պատիժն է: Արդի անտեսական դրութիւնը՝ գասակարգային խտրութիւնները չեղեցով, անհասանելի անհասարկութիւն

նը բազմապատկելով, և ընկերութեան երկու ծայրերը հետզհետէ իրարմէ հեռացնելով ժողովուրդին հաւաքական կեանքին սպառնացող մեծ աղէտ մը ի գոյ բերած է: Իմացական ամենաբարձր մշակութիւնը և մտային խոր խաւարը, մեծափարթամ հարստութիւնը և սարքակացած աղքատութիւնը, ինքնամիտի պարկեշտութիւնը և անասնակերպ կենցաղավարութիւնը դէմ առ դէմ կը կանգնին արդի ընկերութեան մէջ. մանաւանդ քաղաքին կեանքին մէջ: Զօրապետ Պոլիէն Անգղիական քաղաքակրթութեան մէջ այս փոխադր նշմարելով ու մատնանշելով իր ազգին անփոխարինելի ծառայութիւն մը մատուցանելէ զատ ուրիշ ազգերն ալ ցյաւախեան իրեն երախտապարտ ըրաւ: Քանզի միթէ միեւնոյն փոխադր չը կրճեր սիրար Միացեալ Նահանգաց և Գաղղիոյ և Գերմանիոյ, այս, ամէն երկրին ուր քաղաքակրթութիւնը մուտ գտած է: Ահա Նիւ Եորք: Ո՛չ ապաքէն այս մեծահարուստ մայրաքաղաքին մէջ նուաւտացած ու յուսահատ աղքատութիւն մը, այս գործարաններու և վաճառատուններու շուքին տակ գրեթէ անասնացած բազմութիւն մը, այս անտեսական երկինքի մէջ ընկերական դժոխք մը կայ: Եւ ո՞վ չգիտեր որ ազանկ դասակարգի մը լոկ գոյութիւնը քաղաքակրթութեան գոյութեանը դէմ մըշտնջենական սպառնալիք մ'է: Շղթայ մը իր տկարագոյն օգակէն զօրաւոր չկրնար ըլլալ: Բերդ մը այնքան սալահով է որքան անոր անպաշտպան պատնէշը: Մարմին մը միայն իր ակտայեալ գործարանին չափ առողջ կը սեպուի: Նմանապէս ցեղը ա՛յնքան միայն կորովի է որքան անոր անկեալ ու ողորդեալ խաւերը: Այս դասը սորովի կ'արժէր: Զօրապետ Պոլիէն եղաւ ընտրուած վարժապետը: Նա «մէկ կէսին» աչքը բացաւ տեսնելու թէ «միւս կէսը ի՞նչպէս կ'ապրի»:

Երկրորդ՝ Եկեղեցին իր առանդակաւ կերպերովը այս ողբալի կացութիւնը դառնանելու անկարող է:

Այսօր նոր կացութիւն մը կայ որ նոր գործիքներ կը պահանջէ: Ընկերութեան ողողեալ խաւերը Եկեղեցիէն օտարացած կ'ապրին և յայտնապէս անմատչելի ալ պիտի մնան ցորչափ Եկեղեցին մեկուսացեալ դիրք մը բռնէ: Անոնք Եկեղեցիին չափի գան. սոք չունին. Եկեղեցին անոնց պէտք է երթայ: Աւետարանը բռնէն դուրս ալ քարոզուելու է: Ասիկա, սակայն, նոր ճշմարտութիւն մը չէ: «Գացէք բոլոր աշխարհը», ըստ մեր Տէրը: Գացէ՛ք: Եկեղեցին ինքնամիտփ ու կլկլացեալ կեանքովը չին աշուշտական հրամանը մոռնալու վտանգին մէջ էր: Աստուած մեզի պարտականութիւնը յիշեցնելու համար Զօրապետ Պուլի՛ք հանց: Լսեցինք ու հասկցանք:

Երրորդ՝ Ընկերակաւ Վերածնունդը կրօնական սկզբունքներու հաւանքս եւ Քրիստոնեական ոյժերով պիտի կոտորուի:

Ընկերական յեղաշրջում մը պէտք է, բայց ոչ ընկերակարական տեսակէն: Ընկերակարականութիւնը գործարանային ախտ մը ի ցոյց կը դնէ, սակայն բուժելու կարողութիւն չունի: Տիրականապէս կրօնական չեղող ունէ մեթոտ՝ ընկերային չարիքներուն առջև անզօր մնալու դատապարտուած է: Մարդը ընազգմամբ կրօնական արարած է: Հացով միայն չապրիր, հապա Աստուծոյ բերնէն ելած խօսքովը: Աստուծոյ կարօտն է անոր խորագոյն կիրքը: Զօրապետ Պուլի՛ք այս ճշմարտութիւնը տեսնելու և իր պատգամը մարդուն ամենէն տարրական կարօտութեանը վրայ հիմնելու իմաստութիւնը ունեցաւ: «Ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փափաքի, անանկ ալ իմ անձս Քեզի կը փափաքի, ով Աստուած:» Ասիկա Սաղմոսեղոսին հետ կը խոստովանէր: «Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւի են արդարութեան, քան-

դի անոնք պիտի կշտանան» Յիսուսի այս խօսքն ալ փորձած ու շիտակ գտած էր: Արդ իր աշխատութեան վերջնական նպատակը մարդիկը Աստուծոյ հետ անձնական ծանօթութեան բերելն էր. ուրիշ ամէն բան ասոր ստորադաս և օժանդակ կը համարէր: Մէկ խօսքով, Ընկերութեան համար «նոր երկինք մը և նոր երկիր մը» կը փնտեր, բայց նոր երկինքը նոր երկրին մէջ չէր փնտեր ինչպէս ընկերակարականը կ'ընէ. հապա նոր երկիրը նոր երկինքին մէջ կը փնտռէր, որ Յիսուսի կերպուն է: Անոր համար է որ «նոստրակ ժողովուրդը յօժարութեամբ կ'ունկնդրէր անոր», ինչպէս ատենօք ունկնդրած էր անոր Փրկչին, Տէր Յիսուսի:

Աստուած՝ որ չատ մասերով ու շատ կերպերով հայբերուն խօսած է մարդարէներով, մեր սերունդին ալ խօսեցաւ այս եղական մարդուն թէ՛ կեանքովը թէ՛ մահովը. որ բարի պատերազմը պատերազմեցաւ, ընթացքը կատարեց, հաւատքը պահեց, արդարութեան պահովը թագադրուեցաւ: Օրհնեալ ըլլայ յիշատակը Քրիստոսի այս քաջ զինուորին:

Նիւ Եօք

Մ. Կ. ՓԱՓԱԶԵԱՆ



Չ Ի Ն Ո Ի Ո Ր Ի Ն Ե Ր Գ Ը

«Բարի պատերազմը պատերազմեցայ :»
Բ Տիմ. Գ. 7:

1. Օ՛ն, Փրկչին զինուորներ,
Օ՛ն, յառաջ ի մարտ,
Խաչանիշ գրողը ձեր
Թող ծածանի յաղթ.
Քրիստոս մեր Տէր Աբբան.
Առաջնորդն է մեր,
Օ՛ն, կըռուինք յաղթական,
Բռնենք գրողն ի վեր:
Թմբ. Օ՛ն, Փրկչին զինուորներ,
Օ՛ն, յառաջ ի մարտ,
Խաչանիշ գրողը ձեր
Թող ծածանի յաղթ:
2. Տէրոջ եկեղեցին
Շարժի զերթ բանակ,
Մեզ ալ պահուած է հին
Սըրբոց յաղթանակ.
Մընանք միշտ անբաժան
Մէկ սիրտ մէկ հոգի,
Սիրով եղբայրութեան
Յոյսովն հաւատքի:
Թմբ. Օ՛ն, Փրկչին զինուոր, Էն.
3. Դահեր կը կործանեն
Ու պետութիւններ,
Տէրոջ եկեղեցին
Կը մնայ անբեր.
Դժոխքին սեւ դուռներ
Յաղթել չեն կարող,
Ձայգ-խոստացած է Տէր
Անսուտ խոստումով:
Թմբ. Օ՛ն, Փրկչին զինուոր, Էն.
4. Օ՛ն, դուք ժողովուրդներ,
Միացէ՛ք մեր խումբին.
Խառնեցէք ձայնն ալ ձեր
Յաղթութեան երգին:
Փա՛ռք, պատիւ մեծ Փրկչին.
Թագաւորին մեր,
Թող միշտ մեզ ձայնակցին
Մարդիկ, հրեշտակներ:
Թմբ. Օ՛ն, Փրկչին զինուոր, Էն.
Թարգ. ԳՐ. Լ. ԳԱՆՈՒՍԵԱՆ

Այս ընթեր եւ շինիչ փարոքը նախ հրա-
սարկուեցաւ «Աւետարներ»ի մէջ, 1912 Հոկ.
5 եւ 12ին: «Աւետարներ» ընթանիմներուն ա-
մեն մէկ անդամին համար քերք մըն է:

Հստակութեամբ, ամեն շաքար կրօնա-
կան. զիսական, գրական, քաղաքական եւ այլ
մեծ շահագրգռութիւն ունեցող նիւթեր կը
պարունակէ: Հարկ է որ կարդացուի ամեն
Հայ սան մէջ: Բաժանորդագիրն է, Թորքիոյ
համար, 40 դահ., ուրիշ երկրներու համար,
2 տար, 8 շիշին կաւ 10 Ֆրանկ:

Ամսական Մանկանց «Աւետարներ» պատկե-
րազարդ՝ տարեկան 6 դահ.: Մէկ հասցէի դր-
կուած 15 օրինակներու համար 75 դահ. եւ
մէկ հասցէի դրկուած 25 օրինակներու հա-
մար մէկ Օսմ. ոսկի կը պահանջուի: Հասցէ,
Վեր. Տր. Գ. Ու. Մեփաղլը, Պաշկ-Հառզ,
Կ. Պոլիս:

9/11

ԳԻՆ 20 ՓԱՐԱՑ



Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկերութեան
Պապ Բ Մ. Վ. Էպիսկոպոս Զատեմի, Թիւ 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0172342

